

3253

3K33

4-97

Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՍԵՐԻԱ № 19

Պրակտիկական բարձրագույն դպրոցի, մասնաճյուղի

Ի. ՍՏԱԼԻՆ

ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
XIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՅԿ33

Կ-97

Յ Ե Ր Ե Վ Ա Ն
1924

21 JUN 2005

14 NOV 2001

3K33
4-97

Պրոֆեսորներ բոլոր յերկրների, միացե՛ք.

300
1613-05

Ի. ՍՏԱԼԻՆ




ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

1003
12903

XIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Թարգմ. Ս.ԲՇ.

ԵՇՐԵՎԱՆ
1924



ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ

Ընկերներ, XIII-րդ համագումարի փորձումները յետ մանրամասն վերլուծության չեմ յենթարկի: Շատ են այդ փորձումները, մի ամբողջ բրոջուր են կազմում և հազիվ հնարավոր լինի այժմ նրանց վերլուծությունը, մանավանդ, վոր դրա համար այժմ փոշ յես և փոշ ել գուք ժամանակ ունենք: Ուստի կարծում եմ, վոր զեկուցման մեջ նպատակահարմար ե ինկատի առնել հիմնական կետերն ու պարզաբանել նրանց, վորպեսզի ձեզ համար հեշտանա փորձումների ուսումնասիրությունը հետո, ձեր տանը:

Այդպես ուրեմն, յեթե XIII-րդ համագումարի փորձումները մանրամասնորեն ուսումնասիրենք, նրանց մեջ շոշափված զանազան հարցերը կարելի ե վերածել չորս հիմնական հարցերի, վորոնք կարմիր թելով անցնում են բոլոր փորձումների միջով:

Վորոնք են այդ հարցերը: Առաջին հիմնական հարցը, կամ հարցերի առաջին խումբը վերաբերվում ե մեր Հանրապետության արտաքին զբաղմանը, միջազգային աշխարհում մեր հանրապետության գրաթյունն ամրապնդելուն:

Յերկրորդ հիմնական հարցը, կամ հարցերի յերկրորդ խումբը — պետական արդյունաբերությունը գյուղական տնտեսության հետ մերձեցնելուն, պրոլետարիատի և գյուղացիության միությունն են վերաբերվում:

Հարցերի յերկրորդ խումբն ընդկրկում է աշխատավոր մասնային պրոլետարական դիկտատուրայի և սոցիալիզմի վոյսով դաստիարակելուն և վերագաստիարակելուն:

Վերջապես հարցերի չորրորդ խումբը վերաբերվում է իրեն՝ կուսակցության, նրա ներքին կյանքին, նրա գոյությանն ու գարգացմանը: Զեկուցմանս վերջում առանձին կխոսեմ XIII-րդ համագումարի վորոշումների հետ կապված գավառական աշխատավորների անելիքների մասին:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Ի՞նչ նոր բան ավեց անցած տարին, Սորհրդային Ռուսաստանի միջազգային դրության խմատով: Ինչո՞ւն է կայանում այն նորը և հիմնականը միջազգային աշխարհում, վորն անհրաժեշտ է, հին տարուց նոր տարուն անցնելու, հաշվի առնել, և վորը չեր կարող հաշվի չառնել ինքը XIII-րդ համագումարը

Այդ նորը կայանում է նախ նրանում, վոր անցած տարում մենք առիթ ունեցանք դիտելու Արևմտյան Յեվրոպան բացարձակ ֆաշիստական գարձելու մի շարք փորձեր, վորոնք հող չունեցան և անհաջողության մտանվեցին: Յեթե մի կողմ թողնենք Իտալիան, ուր ֆաշիզմը քայքայվում է, այդ դեպքում Յեվրոպայի կենտրոնական յերկրներում՝ Ֆրանսիայում և Անգլիայում, Յեվրոպայի քաղաքականությունը ֆաշիստականացնելու ձգտումները վորոշակի խորտակվեցին, իսկ այդ ձգուման հեղինակները՝ Պուանկարեն ու Կերգոնը, հասարակ լեզվով առած, թոան, շարքերից դուրս շարավեցին: Այդ առաջին նոր բանն է, վոր ավեց մեզ անցած տարին:

Յերկրորդը, վոր մեզ ավեց անցած տարին, — դա Անգլիայի և Ֆրանսիայի ոսգմական յեռանդ հայտնաբերող իմպերիալիստների մի շարք փորձերն էին, մեր յերկիրը մեկուսացնելու փորձեր, վորոնք միանգամայն անհաջողու-

թյուն կրեցին: Հազիվ կարիք լինի կասկածելու, վոր Պուանկարեյի բազմաթիվ խարդավանքները, Սորհրդային Միության դեմ և Կերգոնի հայտնի վերջնազիրը մեր յերկիրը մեկուսացնելու նպատակը չունեին: Յեվ ի՞նչ: Սորհրդային Միության մեկուսացման փոխարեն ստացվեց նրա փաստական ճանաչումը: Ավելին. — Սորհրդային միության մեկուսացման փոխարեն ստացվեց մեկուսացընել ցանկացողների մեկուսացում՝ Պուանկարեյի և Կերգոնի հրաժարական: Մեր յերկրի աեսակարար կշիտն ավելի նշանակալից էր, քան այդ կարող էր թվալ իմպերալիզմի մի քանի ծեր քաղաքագետների: Այս յերկրորդն է, վոր անցած տարին արտաքին քաղաքականության ասպարեզում ավեց մեզ:

Ինչո՞վ բացատրել այս ամենը:

Վոմանք հակված են մեր քաղաքականության խելացի լինելով բացաղբելու այդ: Յեռ չեմ ժխտում, վոր մեր քաղաքականությունը յեղել է, յեթե վոչ խելացի, համենայն դեպս ուղիղ, վորը հաստատվել է XIII-րդ համագումարի կողմից: Բայց միայն մեր քաղաքականության խելացի կամ ուղիղ լինելով բացատրել չի կարելի: Խնդիրը վոչ այնքան մեր քաղաքականության ուղիղ լինելու մեջն է, վորքան այն պայմանի, վորը վերջերս ստեղծվեց Յեվրոպայում և վորը վորոշեց մեր քաղաքականության հաջողությունները: Անհրաժեշտ է այստեղ հիշատակել յերեք հանգամանք:

Առաջինը. — Իմպերալիստական պետությունների անգորությունն իրենց զինվորական հաղթանակների արդյունքները կարգավորելու և Յեվրոպայում քիչ թե շատ սանելի խաղաղություն սահմանելու, նրանց անընդունակությունը հետագայում զարգանալու առանց հաղթած յերկրներն ու զաղութները կողոպտելու, թալանածը բաժանելու առանց միմիանց հետ ընդհարումներ ու վեճեր ունենալու: Մրանց հետևանքներով նոր սպառազինումներ: Այստեղից՝ նոր պատերազմի վախ: Իսկ ժողովրդական

մասսաները պատերազմ չեն ցանկանում, վորովհետև նրանք դեռ չեն մոռացել կապիտալիստների շահի համար իրենց կրած զոհերը: Այստեղից ել առաջանում է ժողովրդական մեծացող դժգոհությունը ռազմատենչ իմպերալիզմի քաղաքականությունից: Այստեղ է իմպերալիզմի ներքին թուլություն պատճառը: Ինչո՞ւ քչեցին Պուանկարեյին ու Կերգոնին: Վորովհետև ժողովրդական համբավը նրանց նոր պատերազմների պատճառ է համարում: Վորովհետև նրանք իրենց բաց-ռազմատենչ քաղաքականությամբ մասսայի մեջ դժգոհություն առաջացրին ընդհանրապես իմպերալիզմի դեմ և դրանով իսկ իմպերալիզմի համար վտանգ ստեղծեցին:

Յերկրորդ.— Յերկրի ներսում խորհրդային իշխանություն ամրապնդումը: Կապիտալիստական պետությունները խորհրդային իշխանությունը յերկրի ներսում կործանելու ուղղությունն էլին վերցրել: Սաղմոսերգուն ասում է, վոր մանուկների շրթունքներով յերբեմն աստված ճշմարտությունն է ասում: Յեթե արևմտյան իմպերալիզմն աստված համարենք, այդ դեպքում բնական է, վոր նա առանց իր մանկան յուր գնալ չի կարող: Յեվ անազանվեց նրա մանուկը հանձինս Զիխտ-Սլովակիայի արտաքին գործերի մինիստր Բեշենի, վորի շուրթերով հազարարեց, վոր չպետք է շտապել ճանաչելու Հանրապետությունների Միությունը, խորհրդային իշխանության անհաստատուն լինելու շնորհիվ, վորովհետև խորհրդային իշխանությունը շուտով կփոխարինվի բուրժուական-դեմոկրատական նոր իշխանությամբ, ուստի լավ կլինեք առայժմ «ձեռնպահ» մնալ Խորհրդային Միության հետ «նորմալ հարաբերություններ» սկսելուց: Այդպես եր դեռ վոչ շատ ժամանակ առաջ: Բայց, իմպերալիզմի, իր մանկան շուրթերով ազդարարված «ճշմարտությունը» հազիվ մի գույգ ամիս կյանք ունեցավ, վորովհետև ինչպես հայանի յե, «ձեռնպահություն» քաղաքականությունը շուտով մի շարք պետությունների կողմից փոխ-

վեց «ճանաչման» քաղաքականություն: Ինչո՞ւ: Վորովհետև ակնհայտություն դեմ դժվար է վրձել, իսկ ակներևն այն է, վոր խորհրդային իշխանությունը ժայռի նման անսասան է: Նախ և առաջ, քաղքենին, վորքան էլ պարզամիտ լինի քաղաքականություն մեջ, չեր կարող չտեսնել, վոր խորհրդային իշխանությունը վերև բուրժուական կառավարությունից թերևս հաստատուն է, վորովհետև դիկտատուրայի յոթ տարիների ընթացքում բուրժուական կառավարությունները գալիս են ու անցնում, իսկ խորհրդային իշխանությունը մնում է: Յերկրորդ՝ նույն քաղքենին իսկ չեր կարող չնկատել, վոր մեր յերկրի անտեսությունը զարգանում է թեկուզ հեղ այն պատճառով, վոր մեր արտահանությունը քայլ առ քայլ մեծանում է: Կարի՞ք կա դեռ ապացուցելու, վոր այդ հանգամանքները խոսում են հողուտ խորհրդային միության և վոչ հակառակ նրան: Մեզ մեղադրում են այն բանում, վոր մենք Արևմտյան Յեվրոպայում կապիտալիզմի դեմ պրոպագանդա լենք մղում: Յես պիտի ասեմ, վոր այդպիսի պրոպագանդա մեզ պետք չէ, նրա կարիքը չենք զգում: Խորհրդային իշխանության գոյությունն իսկ, նրա զարգացումը, նրա անտեսական բարգավաճումը, նրա անտարակույս ամրապնդումը ինքնին շատ լուրջ պրոպագանդա յե յեվրոպական բանվորների մեջ, հողուտ խորհրդային իշխանություն:

Խորհրդային յերկիր յեկած և մեր պրոլետարական կարգ ու կանոնը դիտած ամեն մի բանվոր կարող է տեսնել, թե ինչ է խորհրդային իշխանությունը և բանվոր դասակարգն ինչի է ընդունակ, յեթե իշխանությունը զրույս է կանգնում: Դա իսկական պրոպագանդան է, փաստերի վրա հիմնված պրոպագանդա, վորն ավելի յե ազդում բանվորության վրա, քան խոսքն ու մամուլը: Մեզ մեղադրում են, վոր մենք պրոպագանդա յենք մղում Արևելքում: Այդ էլ դատարկ բան է: Մենք Արևելքում պրոպագանդա մղելու կարիքը չենք զգում: Բավական է

յենթակա յերկրի կամ գաղութի վորևէ քաղաքացի գա խորհրդային յերկիր և կտեսնի, ինչպես սևամորթներն ու սպիտակամորթները, ինչպես ուսաներն ու վոչ ուսաները, ամեն գյուհի և ազգության մարդիկ լծված մի լծասարքում, միասին առաջ են տանում մեծ յերկրի կառավարելու գործը, վոր սա միակ յերկիրն է, ուր ժողովուրդների յեղբայրությունը վոչ թե դատարկ հնչուն է, այլ փաստ: Մենք կարիք չունենք վոչ սպազբական պրոպագանդայի և վոչ բանավոր պրոպագանդայի, քանի վոր այդպիսի պրոպագանդայի գործնական փաստն ունենք, ինչպիսին Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միությունն է:

Յերբորդ. — Խորհրդային իշխանության տեսակարար կշիռն մեծությունը, կապիտալիստական յերկրների ազգաբնակչության մեջ նրա ժողովրդականության աճելը, վորը բացազրվում է ամենից առաջ նրանով, վոր մեր յերկիրն ամբողջ աշխարհում միակն է, վորն ընդունակ է վարելու և իրոք վարում է խաղաղության քաղաքականություն, վարում է այն վոչ թե փարիսեցիպար, այլ ազնվորեն, պարզ, վճռական ու հետևողական: Այժմ բոլորն ընդունում են, և թշնամիները, և բարեկամները, վոր մեր յերկիրն իրոք միակն է, վորն իրավամբ ամբողջ աշխարհում խաղաղության քաղաքականության պատվար ու դրոշակակիր կարող է կոչվել: Կարիք կա ապացուցելու, վոր այս հանգամանքը չէր կարող չուժեղացնել Յեվրոպայի ժողովրդական մասսայի համակրանքն ու հարգանքը հոգուա խորհրդային իշխանության: Ուշադրության առել էք, վոր Յեվրոպայի մի քանի կառավարիչներ աշխատում են իրենց կարիերան կառուցել Խորհրդային Միության հետ ունեցած «բարեկամության» վրա, վոր նույնիսկ նրանցից այնպիսիներն, ինչպես Մուսսոլինին, հեռու չեն այդ «բարեկամությամբ» յերբեմն «փաստակ» ունենալ: Սա ուզողակի ցույց է տալիս, վոր խորհրդային իշխանությունը կապիտալիստական պետությունների լայն մասսաների

մեջ իրոք մեծ ժողովրդականություն ունի: Բայց խորհրդային իշխանությունն իր ժողովրդականությամբ վոչ մի բանի այնքան պարտական չէ, վորքան խաղաղության քաղաքականության, վորը կապիտալիստական շրջափակումի դժվարին պայմաններում տարել է ազնվորեն ու արիությամբ:

Այսպես են, ընդհանուր առմամբ, անցած տարվա ընթացքում մեր արտաքին քաղաքականության հաջողությունները վորոշող պայմանները:

XIII-րդ համագումարն իր վորոշումով հավանություն տվեց կի-ի արտաքին հարաբերությունների քաղաքականության: Ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, վոր համագումարը պարտազրեց կուսակցությանը այսուհետև յեվս վարելու խաղաղության քաղաքականությունը, նոր պատերազմի դեմ վճռական պայքար մղելու քաղաքականությունը, նոր սպառազինման, նոր ընդհարումների բոլոր և ամեն տեսակ կողմնակիցների կամ հրահրողների անխնա մերկացման քաղաքականությունը:

ՄԵՐՁԵՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ի՞նչ է մերձեցումը: Մերձեցումը քաղաքի և գյուղի, մեր արդյունաբերության և դյուղական տնտեսութան, Փարբիկասների և մեր արդյունաբերության արտադրության ու գյուղական պարենի և հում նյութերի մշտական կապը, մշտական փոխանակությունն է: Գյուղական տնտեսությունը չի կարող ապրել, չի կարող գոյություն ունենալ առանց քաղաքային շուկա հանելու իր պարենը և հում նյութը, դրա փոխարեն քաղաքից ստանալով իրեն պետք Փարբիկասն ու աշխատանքի գործիքները: Նմանապես պետական արդյունաբերությունը չի կարող զարգանալ, յեթե գյուղական շուկա չհանե իր Փարբիկասներն ու արտադրությունը, և յեթե գյուղից պարենով ու հում

նյութով չմատակարարվի: Նշանակում է մեր սոցիալիս-
տական արդունաբերութեան գոյութեան աղբյուրը ներքին
շուկան և և, ամենից առաջ, գյուղական շուկան, գյուղա-
կան անտեսութիւնը: Այդ պատճառով մերձեցման հարցը
մեր արդունաբերութեան գոյութեան հարցն է, իրեն՝
պրոլետարիատի գոյութեան հարցը, մեր Հանրապետու-
թեան կենսաց և մահու հարցը, մեր յերկրում սոցիալիզմի
հաղթանակելու հարցն է:

Իրականացնել այդ մերձեցումը, արդունաբերութեան
նյութերի՝ գյուղական անտեսութեան նյութերի հետ ուղ-
ղակի փոխանակութեան միջոցով գյուղի և քաղաքի, ար-
դունաբերութեան և գյուղական անտեսութեան մեջ մըշ-
տական կապ հաստատել, մեզ չհաջողվեց: Չհաջողվեց, վո-
րովհետև մեր արդունաբերութիւնը քիչ է զարգացած,
մեծ ճյուղավորումներով մատակարարող ապարասներ
մեր փոջ յերկրում չունեյինք, իսկ գյուղական անտեսու-
թիւնն ամբողջութեամբ, պատերազից հետո քայքայման
էր յենթարկվել: Այդ պատճառով մենք ստիպված էյինք
ընդունել, այսպես կոչված, նոր անտեսական քաղաքակա-
նութիւն, այսինք՝ ստիպված էյինք հայտարարել
ազատ առևտուր, ապրանքների ազատ շրջանա-
ռութիւն, թույլատրել մասնավոր կապիտալիզմը,
մոբիլիզացիայի յենթարկել գյուղացի և մանր անտեսու-
թիւն ունեցող միլիոնավոր մարդկանց միլիոնավոր ջան-
քերը, վորպեսզի յերկրում առևտրի հոսանք ստեղծենք,
զարգացնենք առևտուրը և հետո, առևտրի սա-
պարեզում տիրելով հաստատուն գիրքերի, առև-
տրի միջոցով մերձեցում հաստատել արդունաբերութեան և
գյուղական անտեսութեան մեջ: Դա մերձեցում հաստա-
տելու կողմնակի ճանապարհն է, ինչպես ասում է Լենի-
նը, վոչ ուղիղ, վոչ գյուղական անտեսութեան նյութերի
ուղղակի փոխանակութեամբ արդունաբերութեան նյութե-
րի հետ, այլ առևտրի միջոցով:

Ինչպիսիք նրանումն է ոգտագործելով միլ-

լիոնավոր մանր անտեսութիւն ունեցողների
ջանքերը, ախրապետով առևտրին, գյուղի և քաղաքի մա-
տակարարման թելերն առնվի պետութեան և կոպերա-
ցիայի ձեռքը և այդպիսով արդունաբերութեան և գյու-
ղական անտեսութեան մեջ անքակտելի կապ, անքակտելի
մերձեցում հաստատվի:

Չի կարելի ասել, վոր այդ ինչդիրը մեզ համար անի-
րագործելի յէ: Չի կարելի, վորովհետև իշխանութեան գը-
լուխ կանգնած պրոլետարիատն ունի, այսպես ասած, բո-
լոր հիմնական միջոցներն այդ մերձեցումը կողմնակի ձե-
վով, առևտրի միջոցով իրականացնելու: Նա՛ պրոլետա-
րիատն իշխանութիւն ունի: Յերկրորդ՝ նա ունի արդյու-
նաբերութիւն: Յերրորդ՝ նա ունի վարի, իսկ վարկը պե-
տութեան ձեռքում ամենամեծ ուժն է: Չորրորդ՝ նա ու-
նի իր առևտրական ապարատը. վատ թէ լավ, բայց և
այնպես այնպիսին, վորը զարգանում և ամրապնդվում է:
Վերջապես նա ունի վորոշ ապրանքային ֆանդեր, վորոնք
կարելի յէ ժամանակ առ ժամանակ շուկա հանել, սան-
ճահարելու և չեզոքացնելու շուկայի քմահաճույքները,
արժեքների վրա ազդելու և այլն: Այս բոլոր միջոցներն
ունի բանվորական կառավարութիւնն, ուստի չի կարելի
ասել, վոր առևտրի միջոցով մերձեցումն իրականացնելը
մեզ համար ուժից վեր ինչդիր է:

Այսպես է գյուղի և քաղաքի մերձեցման կազմակերպ-
ման գործի գրութիւնը՝ մերձեցման կարելիութեամբ:

Յե՛վ այսպես, անցած տարին ի՞նչ նոր և կարեոր բան
ավեց գյուղի և քաղաքի մեջ մերձեցում հաստատելու տե-
սակետով:

Ի՞նչ նոր նյութերի հետ գործ ունեք XIII-րդ համա-
գումարը, մերձեցման ինչդիրները լուծելիս:

Այդ ասպարեզում մի տարվա նորութիւնն այն էր,
վոր անցյալ տարում, մեր գործնական աշխատանքի ըն-
թացքում, մենք առաջին անգամ բաղլավեցինք մի մեծ պայ-
քարի՝ մեր ժողովրդական անտեսութեան ներսում սոցիա-

լիստական և մասնավոր-կապիտալիստական ելեմէնտներին մեջ մեծ մասշտաբով տեղի ունեցող պայքարի, և բազմ-վելով, առաջին անգամ գործնական հողի վրա գրեցինք մերձեցման ինդիքն իր վողջ թանձրութեամբ: Մերձեցման և առևտրի հարցերն այլևս մեր առաջ կանգնած էյին վոչ վորպես թեորետիկ հարցեր, այլ վորպես անմիջական լուծում պահանջող, անմիջական պրակտիկայի խնստ կենսական հարցեր:

Յեթե հիշում եք, Լենինը դեռ XI-րդ համագումարում ասել է, վոր պետական և կոոպերացիայի ուժերով շուկայի գրավումը, առևտրի հիմնական շղերի գրավումը կնխանա վոչ թե խաղաղ աշխատանքի կարգով, այլ՝ սոցիալիստական տարրերի և մասնավոր-կապիտալիստական տարրերի մեջ տեղի ունեցող պայքարի կարգով, վոր այդ տշխատանքը կնխանա մեր ժողովրդական անտեսութեան այդ հակադիր տարրերի հուսահատ մրցութեան կարգով: Յեվ ահա, այդ պայքարը բորբոքվել է: Նա բացվել է գլխավորապես յերկու ուղղութեամբ. — գյուղի և քաղաքի մեջ յեղած առևտրի դժով և վարկատվութեան դժով գլխավորապես գյուղում:

Ի՞նչ արդյունք է տվել այդ պայքարը:

Առաջինը: Պարզվեց, վոր մասնավոր կապիտալը բուն եր գրել վոչ այն ձեռնարկութեաններում, ուր սխալն ա-վելի շատ է ու կապիտալը գանդաղ շրջանառութեան ունի, այլ առևտրի մեջ, այն առևտրի, վորը ինչպես ա-սում է Լենինը, մեր անցողիկ ժամանակի գործողութեան-ների շղաթայի հիմնական ողկան է կադմում: Յեվ բուն գնելով առևտրի մեջ, մասնավոր կապիտալն ամբացել էր այնտեղ այնքան, վոր նրա ձեռքումն էր գտնվում յերկրի մանրածախ առևտրի 80 տոկոսը և հակածախս-մանրա-ծախսի՝ 50 տոկոսը: Այդ բացազրվում է մեր առևտրա-կան և կոոպերատիվ ապարտանքների նոր և դեռ չկանոնավորված լինելով, մեր սինդիկատների սխալ քա-ղաքականութեամբ՝ ի շարը գործադրելով իրենց մենա-

չնորհային դրութեանը և ապրանքների գներն ուռցնելով, մեր ներքին Առևտրի կոմիտարիատի թուլութեամբ, վորը պարտավոր է առևտուրը կանոնավորել պետական հայե-ցակետով, վերջապես մեր այն ժամանակի խորհրդային դրամանշային վալյուտայի անկայունութեամբ, վորը գըլ-խավորապես ծանրանում էր գյուղացու վրա և գրանով պակասեցնում նրա գնողական ընդունակութեանը:

Յերկրորդ: Պարզվեց, վոր գյուղերում վարկերը գրա-նրվում են գլխավորապես կուլակների և վաշխառուների ձեռքում, վոր չքայլոր գյուղացիութեանը, գուրկ լինելով ինվենտարից, ստիպված է ստրկանալ վաշխառուին, ստիպ-ված է անասոված տոկոսներ վճարել ու լուծթեամբ կրել վաշխառուի տիրակալութեանը: Այդ բացազրվում է նրա-նով, վոր մենք դեռ չունենք գյուղատնտեսութեան վար-կի ամենալայն ցանց, վորը կարողանա գյուղացուն ամենա-աժան վարկ մատակարարել և հետին շարք քշել վաշխա-ռուին, վոր այստեղ դեռ պայքարի դաշան ամբողջապես վաշխառուի ձեռքումն է:

Այսպիսով, մի կողմից պետութեան և մյուս կողմից գյուղացիութեան մեջ ցցվել են վաճառականն ու վաշխա-ռուն, վորի շնորհիվ սոցիալիստական արդյունաբերութեան և գյուղական տնտեսութեան մերձեցումը դարձավ դժվա-րին ու չկանոնավորված: Սպառման ամառվա ճգնաժամն անցյալ տարում, այդ դժվարութեան և անկարգավորման արտահայտութեանն էր:

Կուսակցութեանն այն ժամանակ իսկ, համագումար-ից դեռ առաջ, միջոցներ ձեռք առավ, սպառման ճգնա-ժամը վերացնելու և գյուղատնտեսական վարկի հիմք դը-նելու: Գործադրութեան մեջ դրվեց նոր, կայուն վալյու-տա, վորը գործը բարվոքեց: Շուկա հանվեցին ապրանք-ների մեծ քանակութեան, գները զցելու նպատակով, վորը նույնպես նպատավոր ազդեցութեան ունեցավ: Ներ-քառժողկոմատը վերակազմվեց մասնավոր կապիտալի դեմ հաջող պայքար մղելն ապահովող հիմունքներով: Խնդիր

հարուցվեց առևտրական և կոոպերատիվ ձեռնարկությունների աշխատանքը վերափոխել մերձեցման տեսակետի հիման վրա: Սպառման ձգնաժամը փորոշ չափով վերացավ:

Սակայն կուսակցութունը չէր կարող բավականանալ այս միջոցներով: XIII-րդ համագումարի խնդիրը նրանում էր կայանուծ, փոր մերձեցման հարցը կրկին հարուցել իր փողջ մեծությամբ և սպառման ձգնաժամի վերացման նոր պայմաններում, այդ հարցի լուծման հիմնական գծերն ընդգծի:

Ի՞նչ տվեց XIII-րդ համագումարն այդ ասպարեզում: Առաջինը: Համագումարը լողունգ բաց թողեց արդյունաբերության, նախ և առաջ թեթև, նույն հաշվում և մետաղի՝ հետագա ընդարձակման, փորովհետև պարզ է, փոր ֆաբրիկատների և արտադրության այն պաշարով, փորն ունենք մենք, գյուղացուն պետք ապրանքների ծառայել չենք հանգցնի: Յես դեռ չեմ խոսում անգործության շատանալու մասին, փորը համառորեն արդյունաբերության ընդարձակում է պահանջում: Այդ իսկ պատճառով արդյունաբերության հետագա զարգացման հարցը կենաց և մահու հարց է (տես համագումարի փորոշումը Կենտ. կոմի հաշվետվության առթիվ):

Յերկրորդ: Համագումարը լողունգ բաց թողեց գյուղական անտեսության հետագա ընդարձակման մասին, լողունգ՝ ոգնելու գյուղական անտեսությանը ցանքսի հետագա ընդարձակման համար: Այդ նույնպես անհրաժեշտ է մերձեցման համար, փորովհետև պարզ է, փոր գյուղացիությունը շահագրգռված է բավարարելու փոշ միայն մեր արդյունաբերության կարիքները՝ ի հարկե ֆաբրիկատների փոխանակությամբ, այլև արտաքին շուկան՝ անշուշտ մեքենաների փոխանակությամբ: Այստեղից ել առաջ է դալիս գյուղական անտեսության հետագա ընդարձակման պահանջը, փորպես կուսակցական քաղաքականության հերթական խնդիր (գես «աշխատանքը գյուղում» փորոշումը):

Յերրորդ: Համագումարը հաստատեց Ներքին Առևտրի

ժողկոմատի հիմնելը և մեր բոլոր առևտրական ու կոոպերատիվ հիմնարկների առաջ հիմնական խնդիր դրեց պայքարելու մասնավոր կապիտալի դեմ, տերապետելու շուկան, հեռացնելու առևտրից մասնավոր կապիտալը անտեսական բնույթ կրող միջոցներով իջեցնելով ապրանքների արժեքն ու բարձրացնելով նրանց վորակը, ապրանքները շուկայից շուկա շարժելով, արտոնյալ վարկերից ոգտվելով և այն (տես «Ներքին առևտրի և կոոպերացիայի մասին» փորոշումը):

Չորրորդ: Համագումարը քննության առավ և լուծեց գյուղատնտեսական վարկի կարեվորագույն հարցը: Սոսքը փոշ միայն կենտրոնական գյուղատնտեսական բանկին կամ նույն իսկ գյուղատնտեսական վարկի նահանգական կոմիտեներին է վերաբերում: Սոսքը գլխավորապես վերաբերում է զավաճներում և շրջաններում վարկային կոոպերացիաների ընդարձակ ցանց կազմակերպելուն, խոսքը վերաբերում է վարկը դեմոկրատացնելուն, գյուղատնտեսական վարկը գյուղացուն մատչելի դարձնելուն, վաշխանովի ճորտացնող վարկը պետական աժան վարկով փոխարինելուն և գյուղից վաշխառուին դուրս շարժելուն: Դա մեր փողջ անտեսության կարևոր հարցերից է, առանց փորի լուծման, անհնարին է պրոլետարիատի և գյուղացիության քիչ թե շատ հաստատուն մերձեցում: Ահա ինչու XIII-րդ համագումարն այդ հարցն հատուկ ուշադրության առավ (տես «աշխատանքը գյուղում» փորոշումը): Կենտրոնական կոմիտեն կարողացավ 40 միլոն բաց թողնել տալ փորպես գյուղատնտեսական բանկի հիմնադրամ այն հաշվով, փոր պետական բանկի հետ փորոշ պայմանների մեջ մտնելով, այդ գումարը հասրցվի 80 միլյոնի: Կարծում եմ, փոր ուժերի փորոշ լարման դեպքում այդ գումարը կարելի էր հասցնել 100 միլյոնի: Ի հարկե, այդ այնքան ել շատ չէ այնպիսի հսկայի համար, ինչպիսին մեր Միությունն է, սակայն դա ել մի բան է, փորպեսզի թեթևացվի գյուղացու անտեսության բարելավման և

վաշխառուի թաթերից ազատագրվելու ջանքը: Վերևում յես խոսեցի վարկային կոոպերացիայի լայն ցանցի նշանակու-
թյան մասին ազգաս գյուղացիության և գյուղացիության
ու բանվորական պետության մերձեցման տեսակետից:
Սակայն վարկային կոոպերացիան ոգնելու և վոչ միայն
գյուղացիության: Հայտնի պայմանների դեպքում նա ոգ-
նության խոշոր աղբյուր կարող և ծառայել վոչ միայն
գյուղացիությանը պետության կողմից, այլ և պետու-
թյանը՝ գյուղացիության կողմից: Իրոք, յեթե մեզանում
տեղերում՝ գավառներում և շրջաններում գյուղատնտեսա-
կան վարկի լայն ցանցը զարգանա, և համապատասխան
հիմնարկները գյուղացիական մասնաչի համակրությունը
վայելին, այդ դեպքում գյուղացիությունը վոչ միայն կվեր-
ցնի պետությունից, այսինքն այդ հիմնարկները միայն
ակտիվ շրջանառություն կունենան, այլ և գյուղացին ին-
քը կհանձնե նրանց, այսինքն՝ նրանք կունենան նաև պաս-
սիվ շրջանառություն: Դժվար չե պատկերացնել, վոր այդ
վարկային հիմնարկների գործերի նպատակովը ընթացքի
դեպքում, այս վերջինները կդառնան պետությանն ոժան-
գակող այնպիսի նշանավոր աղբյուր բազմամիլյոն գյուղա-
ցիության կողմից, վորի հետ չի կարող հավասարվել վոչ
մի արտաքին փոխառություն:

Հինգերորդ: Համագումարը կրկին հայտարարեց ար-
տաքին առևտրի մենաշնորհի հաստատուն լինելը: Կարծում
եմ կարիք չկա բացազրելու այդ հիմնարկի նշանակու-
թյունն ինչպես արդյունաբերության և գյուղական տնտե-
սության, նույնպես և նրանց մեջ լինելիք մերձեցման հա-
մար: Արտաքին առևտրի մենաշնորհի կարգինալ նշանա-
կությունը նոր ապացույցների կարիք չի զգում (տես
վորոշումը Կ. Կ-ի ղեկուցման առթիվ):

Վեցերորդ: Համագումարը հաստատեց ընդհանրապես
արտահանության և մասնավորապես հացի արտահանու-
թյան ուժեղացման անհրաժեշտությունը: Կարծում եմ,
վոր այս վորոշումը յեվս մեկնաբանության կարիք չի
զգում (տես վորոշումը Կ. Կ-ի ղեկուցման առթիվ):

Յեոթներորդ: Համագումարը վորոշեց ամեն տեսակ
միջոցներ ձեռք առնել, վորպեզի դրամական բեֆորմը,
վորը թեթևացրեց ապրանքաշրջանատությունը և արդունա-
բերության ու գյուղական տնտեսության մեջ ուղակի կապ
հաստատելու գործը, տարվի մինչև վերջ, և վոր՝ դրա
համար անհրաժեշտ բոլոր պայմաններն իրագործվեն ինչ-
պես կենտրոնի, նույնպես և տեղերի ուժերով (տես վո-
րոշումը ըստ Կ. Կ-ի ղեկուցման):

Այսպես ևն XIII-րդ համագումարի լողունգները,
մերձեցման մասին այն հաշվով, վոր արվի առևտրին,
մեր արդյունաբերության և գյուղական տնտեսության
մեջ մերձեցման սմուր կապ հաստատվի և այդպիսով նա-
խապաարատովի ժողովրդական տնտեսության սոցիալիս-
տական հաղթանակը մասնավոր-կապիտալիստական արտա-
րերի վրա:

1003
12403

ԱՇԽԱՏԱԿՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԻ ԴԱՍՏԻՐԱԿԱՆ ՅԵՐԿԱՎԵՐԸ
ԴԱՍՏԻՐԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԸ



Պրոլետարիատի զիկատատուրայի ժամանակը շատում
կուսակցության կենտական խնդիրներից մեկն այն և, վոր
զարկ տա պրոլետարական զիկատատուրայի վողով հին
սերնդի վերագաստիարակության և նոր սերնդի գաստիա-
րակության աշխատանքներին: Հին հասարակությունից
ժառանգած սովորույթները, տրագիցիաներն ու նախա-
պաշարումները սոցիալիզմի վոխերիմ թշնամիներն ևն:
Այդ տրագիցիաներն ու սովորույթներն իրենց ձեռքերում
են պահում միլյոնավոր աշխատավորական մասսաները, նրանք
յերբեմն մարակում են պրոլետարական վողջ խավեր, յեր-
բեմն պրոլետարական զիկատատուրայի զոյությանն իսկ
մեծ փտանգ են սպառնում: Ուստի այդ տրագիցիաների
և սովորությունների դեմ պայքարելը, մեր աշխատանքի
բոլոր ասպարեզներից նրանց անպայման չեզոքացումը,
վերջապես նոր սերուզը պրոլետարական սոցիալիզմի վողով

դաստիարելի մեար կուսակցութեան այն հերթական խնդիրներէն են, առանց վորոնց իրականացման, անհնարին և սոցիալիզմի հաղթանակը: Պետական բարեկարգում, աշխատանք գյուղում, աշխատանք աշխատավոր կանանց մեջ, աշխատանք յերիտասարդութեան մեջ — սրանք են այդ խնդիրները իրականացման համար կուսակցութեան գործունեութեան հիմնական շրջանները:

այ Պայքար պետապարտի բորվորման հմար: Համագումարը քիչ ժամանակ տրամադրեց պետապարտին: ԿՎԿ-ի գեկուցումը պետապարտի պակասութեանները գեմ պայքարելու մասին հաստատվեց առանց վիճաբանութեանները: «Վերահսկիչ հանձնաժողովները» մասին վորոշումը յեմ ընդունվեց առանց վիճաբանութեանները: Գրապատճառն, իմ կարծիքով, ժամանակի սղութեանը և համագումարի առաջ շատ խնդիրներ դրված լինելն էր: Սակայն անպայման սխալ կլինէր դրանից յեզրակացնել, վոր պետապարտի հարցը կուսակցութեանը կարեւոր չի համարում: Ընդհակառակը, պետապարտի հարցը մեր վորջ շինարարութեան մեջ ամենակենսականներէն մեկն է: Աշխատում է արդյոք պետապարտը ազնվարտ, թե՞ կաշառակեր է, ծախքերի մեջ տնտեսում է, թե՞ վասնում է ժողովրդական կարողութեանը, իր աշխատանքի ընթացքում կեղծում է, թե՞ ծառայում է պետութեանը հավատով և ճշմարտութեամբ, աշխատավորները համար ծանր բեռ, թե՞ աշխատավորութեանն ոգնական կազմակերպութեան և, պրոլետարական որինականութեան գազափարի ամրասնդողե, թե՞ մոլորեցնում է ազգաբնակչութեան գիտակցութեանը՝ այդ գաղտփարները ժխտելու վորով, արդյոք մղում է առաջ, գեպի կոմունիստական անպետական հասարակութեան, թե՞ ձգում է հետ, գեպի սովորական բուրժուական պետութեան փթած բյուրոկրատիզմը, — սրանք մի շարք հարցեր են, վորոնց ճշգրիտ լուծումը չեն կարող վճռական նշանակութեան շտնենալ կուսակցութեան և սոցիալիզմի համար: Վոր մեր պետապարտը

մեծ պակասութեաններ ունի, վոր նա ծանրաշարժ է ու թանգ արժե, վոր նա $\frac{9}{10}$ մասով բյուրոկրատիկ է, վոր պետապարտի բյուրոկրատիզմը ճնշում է կուսակցութեանն ու նրա կազմակերպութեաններին, գժվարացնելով պետապարտի բարվորման պայքարը, — հազիվ դրանում կասկածելու կարիք լինի:

Այնինչ պարզ է, յեթե մեր պետապարտան ազատվի իր, թեկուզ մի քանի հիմնական պակասութեաններէն, նա պրոլետարիատի ձեռքում ազգաբնակչութեան լայն շերտերը պրոլետարիատի գիկատտուրայի և սոցիալիզմի վորջով դաստիարակելու և վերագաստիարակելու գործում լավագույն միջոցներէն մեկը կլինէր:

Ահա ինչո՞ւ Լենինը հատուկ ուշադրութեան էր դարձնում պետապարտի բարվորման վրա:

Ահա ինչո՞ւ կուսակցութեանը ստեղծեց բանվորներէն և գյուղացիներէն կազմված հատուկ որգաններ (վերակազմված ԲԳՏ և ընդարձակված ԿՎԿ), մեր պետապարտի պակասութեանները գեմ կովելու համար:

Խնդիրը նրանումն է, վոր ոժանդակվի ԲԳՏ և ԿՎԿ իրենց գժվարին աշխատանքում բարվորելու, պարգացնելու, աժանացնելու և բարոյապես առողջացնելու պետապարտը վերից վար (տես «Վերահսկիչ հանձնաժողովները» աշխատանքի մասին» վորոշումը):

բ) Աշխատանքը գյուղում: Այս հարցը մեր կուսակցական պրակտիկայում ամենաբարդ և գժվարին հարցերէն մեկն է: Գյուղում աշխատանք վարելու հիմնական գժերի մասին Համագումարը սրանչեղի վորոշում հանեց: Բավական է այդ վորոշումը համեմատվի V III համագումարի վորոշման հետ և պարզ կլինի, թե վորքան առաջ է անցել կուսակցութեանն այդ ասպարեզում: Բայց սխալ կլինէր կարծել, վոր XIII-րդ համագումարն այս տարի հարցն իր ամբողջութեամբ սպառել է, կամ կարող էր սպառել: Այնպիսի հարցերն, ինչպիսիք են կոլլեկտիվ տնտեսութեանները ձեւերը, խորհրդային տնտեսութեանները

վերանորոգութիւնը, հողաշինարարական աշխատանքի կանոնաւորումը կենտրոնում և շրջաններում, գյուղատնտեսական կոոպերացիայի հետ կապված աշխատանքի կազմակերպման նոր ձևերը, մեր Միութեան շրջանների առանձնահատկութիւնների ընդգրկումը և իր աշխատանքի ընթացքում այդ առանձնահատկութիւններն հաշվի առնելը, — այս բոլոր հարցերը, հասկանալի պատճառներով, չեյին կարող ամբողջական վորոշում ստանալ համագումարում: Համագումարի վորոշումը կարևոր և այն տեսակետից, վոր նա աշխատանքի հիմնական դժերն ի նկատի առնելով, հեշտացնում և հարցերի հետագա մշակութիւնը: Դուք անշուշտ զիտեք, վոր ԿԿ-ումի պլենումը գյուղում աշխատանքներ վարելու այդ հարցերի մշակման համար հատուկ հանձնաժողով և ստեղծել:

Վորոշման կենտրոնը կազմում և գյուղական մասսաները կոոպերացիայի մեջ առնելու լոգունը: Կոոպերացիան տարվելու և յերեք գծով, — սպառողական, գյուղատնտեսական և վարկային: Սա գյուղացիութեան, նրա ազգատ և միջնեկ խավի մեջ կոլլեկտիվիզմի զարգացումը և մեթոդները հաստատելու ուղիղ միջոցներից մեկն և (տես համագումարի վորոշումը «աշխատանքը գյուղում»):

դ) Աշխատանքի աշխատավոր կանանց մեջ: Յեա գեո համագումարում արած իմ գեկուցման մեջ ասացի, վոր մեր աշխատանքի այդ ստպարեզը մեզ մոտ անսեպում և, վոր այդ աշխատանքը կուսակցութեան համար շափազանց կարևոր և, իսկ մի բանի ղեպերում՝ նոր սերունդը սոցիալիզմի վոգով դաստիարակելու գործում, մճուական նշանակութեան ունեցող: Կրկնել այն, ինչ վոր ասված և համագումարում, իհարկե, չարմե: Յեա միայն կուգեյի ուշազըրութեան հրավիրել այն բանի վրա, վոր համագումարը, զժբախտարար հնարավորութեան չունենալով առանձնապես բննելու աշխատավոր կանանց մեջ աշխատանքներ վարելու հարցը, այնուամենայնիվ հատուկ վորոշում հանեց, վոր «համագումարը վողջ կուսակցութեան հատուկ

ուշազըրութեանն և հրավերում բանվոր և գյուղացի կանանց մեջ աշխատանքների ուժեղացման վրա և նրանց կուսակցական ու խորհրդային բնարական սրգաններում սուաջ քաշելուն (տես վորոշումը բաա ԿԿ-ի գեկուցման): Յեա կարծում եմ, վոր հետեյալ համագումարում պիտի այդ հարցով հատկապես զբաղվել: Համագումարի վորոշման համաձայն, ԿԿ-ի պլենումը, համագումարի փակումից անմիջապես հետո, վորոշեց հանձնարարել կազմակերպչական բյուրոյին հատուկ միջոցներ ընձեռել, վորպագի աշխատանքն աշխատավոր կանանց մեջ հարկավոր բարձրութեան հասնի:

դ) Աշխատանքը յերիտասարգութեան մեջ: Յերիտասարգութեան մեջ աշխատանքներ վարելուն համագումարն առանձնակի ուշազըրութեան զարձրեց: Այս հարցի առթիվ համագումարի հանած վորոշումն, իմ կարծիքով, համագումարի բոլոր վորոշումներից ամենամշակվածը և ամենից սպառվածն և: Այդ իսկ պատճառով կուսակցութեան և յերիտասարգութեան համար նա մեծ արժեք ունի:

Յերիտասարգութեան նշանակութեանը, — յես խոսում եմ բանվոր-գյուղացիական յերիտասարգութեան մասին, — կայանում և նրանում, վոր նա ապագան կառուցելու ամենարարերար հողն և, վոր նա իր մեջ կրում և մեր յերկրի ապագան: Յեթե մեր աշխատանքը պետապարատում, գյուղացիները, աշխատավոր կանանց մեջ խոշորագույն նշանակութեան ունի հին սովորութիւնները և տրադիցիարերը հազթահարելու, աշխատավոր մասայի հին սերնդի վերադաստիարակման գործում, ապա այդ տրադիցիաներից և սովորութիւններից քիչ թե շատ ազատ յերիտասարգութեան մեջ այդ աշխատանքը՝ աշխատավորների նոր կազրերը պրոլետարական գիկաստուրայի և սոցիալիզմի վոգով դաստիարակելու գործում, անգնահատելի նշանակութեան ունի, վորովհետև այստեղ հողը, — այդ ինքնին հասկանալի և, — ամենանպաստավորն և:

Այստեղից առաջանում և Յերիտասարգական Միու-

թիւն կարևորագույն նշանակութիւնը և նրա ճշուդագիտութեամբ պիտոյններն մեջ:

Յերիտասարդական Միութիւնը բանվոր և գյուղացի յերիտասարդութեան ազատ կազմակերպութիւնն է: Նրա կենտրոնը, նրա կորիզը բանվոր յերիտասարդութիւնն է: Նրա հենարանը՝ գյուղական յերիտասարդութիւնը: Բանվոր և գյուղացի յերիտասարդութեան միութիւն, — անա յերիտասարդական կազմակերպութեան հիմունքը: Պրոլետարական կորիզի շուրջը համախմբել գյուղական յերիտասարդութեան մեջ յեղած բոլոր ազնիւ և հեղափոխական տարրերին, իր անգամներին վարժեցնել անտեսական և կուլտուրական, գինվորական և վարչական աշխատանքներին բոլոր ասպարեզներում, պատրաստել նրանցից մեր յերկրի համար հերոսներ ու կառուցողներ, աշխատավորներ ու ղեկավարներ, — սրանք են Յերիտասարդական Միութեան անելիքները (տես «աշխատանքը յերիտասարդութեան մեջ» վորոշումը):

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Այստեղ կա չորս հարց. — ուղարկելիա, Լենինյան կոչ, կուսակցական ղեկավարութեան գեմակրատացում, թեւորյան ընդհանրապես և լենինիզմի պրոպագանդան մասնավորապես:

ա) Ուղարկելիայի մասին: Այժմ, յերբ ուղարկելիայի հարցը համագումարի կողմից արգեն լուծվել է, և գործն ուրեմն լիկվիդացիայի յենթարկվել, կարելի յե հարց տալ, — ի՞նչ է ներկայացնում իրենից ուղարկելիան և իսկապես ինչի՞ մասին էր պայքար մղում գիսկուսիայի շրջանում: Յես կարծում եմ, ընկերներ, վոր պայքար էր մղվում կուսակցութեան կյանքի և մահման համար: Ուղարկելիան գուցե ինքն էլ չէր գիտակցում այդ: Սակայն հարցը զրանում չէ: Հարցը նրանում չէ, թե ի՞նչ նպա-

տակներ է գնում իրեն այս կամ այն ընկերը, կամ այս կամ այն ուղարկելիան իմբակը: Հարցն այն որեկտիվ հետեանքների մեջն է, վորն անխուսափելիորեն բղխում է ամլյալ իմբակի գործունեյութիւնից: Ի՞նչ է նշանակում կոիվ հայտարարել կուսակցական ապարատին: Այդ նշանակում է խորտակել կուսակցութիւնը: Ի՞նչ է նշանակում յերիտասարդութիւնը կազրերի գեմ հանել: Նշանակում է քայքայել կուսակցութիւնը: Ի՞նչ է նշանակում պայքարել իմբավորումների ազատութեան համար: Նշանակում է մաս-մաս անել կուսակցութիւնը, նրա միաձույլութիւնը: Ի՞նչ է նշանակում կուսակցութեան կազրերը գահազրկելը՝ վերածնման գատարկախոսութեամբ: Այդ նշանակում է աշխատել շրջել կուսակցութիւնը, կտորել նրա մեջքը: Այո, ընկերներ, խոսքը կուսակցութեան կյանքին ու մահին էր վերաբերվում: Դրանով է իսկապես բացաղբվում այն կրքոտութիւնը, վորով տարվում էր մեզ մոտ գիսկուսիան: Դրանով իսկ պիտի բացաղբել մեր կուսակցութեան մեջ այն աննախընթաց փաստը, վոր համագումարը միաձայն գատապարտեց ուղարկելիայի պատճորման: Լուրջ վտանգը միաձույլ յերկաթի ողակով միացրեց կուսակցութիւնը:

Ուղարկելիայի մասին մի հետաքրքիր պատմական տեղեկութիւն: Սկսած թեկուզ մեր կուսակցութեան V II-րդ համագումարից: Դա առաջին համագումարն էր խորհրդային իշխանութեան հրապարակ գալուց հետո (1918 թվի սկզբին): Այնտեղ էլ ուղարկելիա ունեյինք գլխավորութեամբ X III-րդ համագումարի ուղարկելիայի ղեկավար ընկերներին: Խնդիրը վերաբերվում էր պատերազմին ու խաղաղութեանը, Բրեստի գաշնազրին: Այն ժամանակ ուղարկելիայի կողմն էյին համագումարի անգամների մի քարորդը: Դա, համենայն դեպս, փոքր թիվ չէ: Իզուր չէյին այն ժամանակ ճեղքվածքի մասին խոսում: Յերկու տարի հետո, X-րդ համագումարում պրոֆմիութիւններին հարցի առթիվ կրկին բորբոքվեց կուսակցութեան մեջ պայ-

քար, նույն ընկերները գլխավորութեամբ: Այն ժամանակ
 ուղարկուցիան ընդգրկում էր համազումարի մեկ ութերորդա-
 կան մասը: Յերկու տարի հետո, XIII-րդ համազումարու-
 ւում, վորը նորերս վերջացրեց իր աշխատանքները, բոր-
 բորվեց նոր պաշար: Այստեղ էլ ուղարկուցիա կար, սա-
 կայն համազումարում նա վոչ մի ձայն չունեցավ: Այս
 արդեն, ինչպես տեսնում եք, շատ վատ է ուղարկուցիայի
 համար: Յեւ այդպես, ուղարկուցիան յերեք անգամ վոր-
 ձեր արեց կուսակցութեան հիմնական կողքերը դեմ պաշ-
 քար մղելու: Առաջին անգամ VII-րդ, յերկրորդ անգամ
 X-րդ և յերրորդ անգամ XIII-րդ համազումարում և ամեն
 անգամ հողթահարվելով, կորցնում էր կողմնակիցներին,
 քայլ առ քայլ քշացնելով իր բանակի թիվը: Ի՞նչ են ցույց
 տալիս այդ բոլոր փաստերը: Նախ այն, վոր վեր-
 ջին վեցամյակում մեր կուսակցութեան պատմութեանը
 մեր կուսակցութեան հիմնական կողքերը մեծամասնու-
 թեան ստորձանարար գարգացող միաձուլման պատմու-
 թեանն է: Յերկրորդ՝ վոր ուղարկուցիայի կողմնակից տար-
 րերը մեկը մյուսի հետեից կտրվում էլին նրանից ու միա-
 նալով կուսակցութեան հիմնական միջուկին, խոտացնում
 նրա շարքերը: Յեզրտակացութեան, յենթադրելի յե, վոր
 ուղարկուցիայից՝ վորո XIII-րդ համազումարում վոչ մի
 պատգամավոր չուներ (մենք համեմատական ընարու-
 թեաններ չունենք), բայց անկասկած է, վոր կուսակցու-
 թեան մեջ իր կողմնակիցներն ունի, մի շարք ընկերներ
 կրածանվեն ու կմիանան կուսակցութեան հիմնական կո-
 րիդին, ինչպես այդ յեղել է անցյալում:

Ի՞նչպիսի քաղաքականութեան պիտի ունենանք այդ
 ուղարկուցիաներնրի, կամ ավելի ճիշտ ասած, նախկին
 ուղարկուցիաներնրի նկատմամբ: Նա պիտի լինի գուտ ըն-
 կերական: Պիտի ամեն տեսակ միջոցներ ձեռք առնվի
 հեշտացնելու այդպիսիների անցնելը դեպի կուսակցու-
 թեան հիմնական կորիզը և այդ կորիզի հետ համաձայն
 տարվող աշխատանքը:

բ) Լենինյան կոչը: Յես կանգ չեմ առնի այն հան-
 պամանքի վրա, վոր Լենինյան կոչը, այսինքն մեր կու-
 սակցութեան մեջ բանվորներից 250 հազար նոր անգամ
 ընդունելու փաստը ցույց է տալիս մեր կուսակցութեան
 խորը գեմոկրատական լինելը, այն՝ վոր մեր կուսակցու-
 թեանը փաստորեն բանվոր դասակարգի ընտրյալ սրբանն
 է: Այդ տեսակետից Լենինյան կոչի նշանակութեանը
 հակայական է: Բայց այդ մասին չեյի ուզում խոսել յես
 այսօր: Ուզում էյի ձեր ուշադրութեանը գրավել այն
 փոանգավոր փոգեվորութեան վրա, վոր Լենինյան կոչի հե-
 տեանքով, վերջերս նկատելի է մեր կուսակցութեան մեջ:
 Վոմանք ասում են, վոր էլ հեռուն պիտի գնալ, անգամ-
 ների թիվը հասցնել մինչև միլյոնի: Մյուսներն ավելի
 առաջ են ուզում անցնել, ապացուցելով, վոր լավ կլիներ,
 յեթե այդ թիվը յերկու միլյոնի հասներ: Չեմ կտակածում,
 վոր կլինեն այնպիսիները, վորոնք կցանկանան ավելի ա-
 ոռաջ անցնել: Դա, ընկերներ, փասնգավոր փոգեվորու-
 թեան է: Աշխարհում ամենամեծ գորարանակները վոչըն-
 շացել են, վորովհետև շափագանց են փոգեվորվել, շատ
 են դրավել, և տպա չկարողանալով դրավածը մարսել,
 քայքայվել են: Ամենամեծ կուսակցութեանները կվոչըն-
 շանան, յեթե նրանք շատ փոգեվորվեն, շափից ավելին
 բռնեն և հետո անկարող լինեն բռնածն ընդգրկել, մարսել:
 Ի՞նքներդ դատեցեք: Մեզ մոտ, կուսակցութեան մեջ քա-
 ղաքական անդրադիտութեանը համարում է 60 տոկոսի:
 60 տոկոս քաղաքական անդրադիտութեան մինչև Լենին-
 յան կոչը, իսկ կոչից հետո, վախենում եմ, վոր այդ տո-
 կոսը մինչև 80-ի հասնի: Ժամանակը չե՞, ընկերներ, կանգ
 առնելու: Ժամանակը չե՞ սահմանափակվել ութհարյուր
 հազարով և խիտա ու վորոշ գնել կուսակցութեան կազմի
 վորակային բարելավման, Լենինյան կոչով ընդունվածնե-
 րին Լենինիգմի հիմքերը ուսուցման, նրանց գիտակից
 Լենինյանականներ դարձնելու հարցերը: Յես կարծում
 եմ, վոր ժամանակն է:

դ) Կուսակցական ղեկավարութեան ղեմնորոշողականացումը: Լենինյան կոչը մեր կուսակցութեան խորը ղեմնորոշողական լինելն է ցույց տալիս, նրա հիմնական բնութեանը պրոլետարական կազմութիւնը, միլիոնավոր անկուսակցական մասսայի անառակույս հավատը ղեպի մեր կուսակցութեանը: Սակայն այդ ամենը չէ, մեր կուսակցութեան ղեմնորոշողական լինելը ցուցաբերող: Դա ղեմնորոշողականութեան մի կողմն է միայն: Մյուս կողմն այն է, վոր ինքը կուսակցական ղեկավարութեանը քայլ առ քայլ ղեմնորոշումն է: Համագումարում արդեն տակն է, վոր կուսակցական ղեկավարութեան ծանրութեան կենտրոնը վերին նեղ շրջանակից և բյուրոյից փոխադրվում է լայն կազմակերպութեան, տեղական և կենտրոնական կազմակերպութեաններին պիտու է, ըստ վորում այդ պլենումները լայնացվում և կազմով բարելավվում են: Դուք դիտեք, վոր մեր ղեկավար կազմակերպութեաններին զարգացման այդ ձգտումը համագումարն ամբողջութեամբ խրախուսեց: Ի՞նչ է ցույց տալիս այս ամենը: Այն՝ վոր մեր ղեկավար կազմակերպութեաններն իրենց գոյութեան արմատները տարածում են պրոլետարական մասսայի ամենախորքերը: Հետաքրքիր է հետևել մեր կուսակցութեան կենտրոնական կոմիտեյի այս վեց տարվա զարգացմանը, նրա թվական և սոցիալական նկատառումով: VII-րդ համագումարին (1918 թ.) մեր ԿԿ-ումը 15 հոգուց էր բաղկացած, վորոնցից բանվոր մեկ հոգի էր (7 տոկոս), իսկ ինտելիգենտներ՝ 14 (93 տոկոս): Այս VII-րդ համագումարին էր: Իսկ այժմ, XIII-րդ համագումարից հետո ԿԿ-ումն ունի 54 անդամ, վորից 29 բանվոր (53 տոկոս) և 25 ինտելիգենտ (47 տոկոս): Սա ակնհայտնի փաստ է կուսակցական ղեկավարութեան ղեմնորոշողական:

դ) Թեորիան ընդհանրապես յեւ Լենինիզմի պրոպագանդա մասնավորապես: Մեր կուսակցութեան փտանգավոր պակասութեաններին մեկը նրա անգամների թեորետիկ մակարդակի անկումն է: Պատճառը

դժոխային գործնական աշխատանքն է, վորն այլևս տրամադրութեան չի թողնում թեորետիկ աշխատանքներով բզբազվելու և առաջացնում է մի անսակ անհոգութեան ղեպի թեորետիկ հարցերը — յեթե ավելին չասենք: Մի քանի նմուշներ:

Վերջերս լրագրում կարգացի բնկերներից մեկի (կարծեմ ընկ. Կամենսկի) գեկուցումը XIII-րդ համագումարի մասին, ուր սեռով սպիտակի վրա սաված էր, վոր մեր կուսակցութեան հերթական խնդիրն է, իբր թե «նեպմանական Ռուսաստանը» սոցիալիստական Ռուսաստանի վերածելը: Ըստ վորում, — վորն ամենից վասն է, — այդ տարրինակ լոգունդը վերագրվում է վոչ այլ վոքի, այլ Բրեն՝ Լենինին: Վոչ ավել, վոչ սրակաս: Այնինչ հայտնի է, վոր վոչ մի նման բան չի ասել և չէր էլ կարող ասել Լենինը, քանի վոր, ինչպես հայտնի յե, աշխարհում «նեպմանական» Ռուսաստան չկա: Ծշմարիտ է, Լենինն ասել է «նեպական» Ռուսաստանի մասին: Սակայն այլ է «նեպական» Ռուսաստանը (այսինքն Խորհրդային Ռուսաստանը), վոր գործադրում է նոր սնտեսական քաղաքականութեանը) և միանգամայն այլ է «նեպմանական» Ռուսաստանը (այսինքն Ռուսաստան, վորի գլուխ կանգնած են նեպմանները): Հասկանում է արդիոք այդ սկզբունքային տարբերութեանն ընկ. Կամենսկը: Անշուշտ հասկանում է: Այդ ղեպքում ինչո՞ւ յե նա արձակել այդ պարսրինակ լոգունդը: Թեորիայի խնդիրների, թեորետիկ ճշգրիտ վորոշումների նկատմամբ ունեցած սովորական անհոգութեամբ: Այն ինչ, այդ տարրինակ լոգունդը յեթե չուղղվի, ամենայն համավանականութեամբ, կուսակցութեան մեջ կարող է բազմաթիվ թյուրիմացութեաններ առաջացնել:

Յեւս մի որինակ: Հաճախ ասում են, վոր մեզ մոտ «կուսակցութեան դիկտատուրա յե»: Յես, ասում է, կուսակցութեան դիկտատուրայի կողմնակից եմ: Յիշում եմ, վոր մեր համագումարներից մեկի, կարծեմ XII-րդ հա-

մագուճարի վորոշումներից մեկում, ի հարկ է անդգուշու-
թյամբ, այդպիսի արտահայտություն կա: Ըստ յերեույ-
թին, ընկերներից մասանք յենթադրում են, վոր մեզ մոտ
կուսակցության և վոչ թե գոտակարգի գիկտատուրա յե:
Բայց այդ հիմարություն և, ընկերներ: Յեթե այդ ճշմա-
րիտ և, ապա սխալ և Լենինը, վոր մեզ սովորեցրել և,
թե խորհուրդներն իրականացնում են գիկտատուրան, իսկ
կուսակցությունը դեկլարարում և խովհուրդները: Այն ժա-
մանակ ճիշտ չե Լենինը, վոր խոսում եր պրոլետարիատի
գիկտատուրայի և վոչ թե կուսակցության գիկտատու-
րայի մասին: Յեթե այդ ճիշտ և, այդ դեպքում պետք
չեն խորհուրդներ, այն ժամանակ X-րդ համագումարում
Լենինն ի գուր եր խոսում «կուսակցական և խորհրդային
սրբանների ստամանների վորոշման անհրաժեշտության»
մասին: Իսկ ինչպես և ինչո՞ւ և այդ հիմարությունը կու-
սակցական միջավայրում ներս ընկել: «կուսակցականու-
թյամբ» սարվելուց, վորն ամենից շատ վրաս և հասցնում
հասկապես ստանց չակերանների կուսակցականության,
թեորեաթիկ խնդիրների նկատմամբ անվույթ լինելուց, լու-
գունդները բաց թողնելուց առաջ նրանց մասին մտածելու սու-
վորություն չունենալուց, վորովհետև բավական և մի ակրն-
թարթ մտածել, բմբունելու համար գատակարգի գիկտա-
տուրան կուսակցական գիկտատուրայով փոխելու անհա-
մակերպությունը: Պետք և ապացուցել, վոր այդ անհա-
մակերպությունը կարող և կուսակցության մեջ շփոթու-
թյուն և խառնիվնթորություն առաջացնել:

Կամ յեվս. - բոլորին հայանի և, վոր դիսկուսիայի
ժամանակ մեր կուսակցության մի մասը յենթարկվեց
սպարդիցոններների հակակուսակցական՝ լենինիզմի կազմա-
կերպչական հիմքերի դեմ վարած ազիտացիային: Յուրա-
բանչյուր բոլշևիկ, վոր անցել և լենինիզմի թեորիայի
ամենակարճ շիտան, կհասկանար, վոր սպարդիցոններների
քարոզը լենինիզմի հետ վոչ մի կապ չունի: Բայց և այն-
պես կուսակցության մի մասը, ինչպես հայանի յե, ամի-

Չապես չկարողացավ տեսնել սպարդիցոններների իսկա-
կան դեմքը: Ինչո՞վ բացազրել այդ: Այդ էլ բացազրվում
և դեպի թեորիան ունեցած անվույթ վերաբերմունքիով,
մեր կուսակցության անդամների թեորեաթիկ մակարդակի
ցածր լինելով:

Դիսկուսիան հերթական հարց գործընց լենինիզմի
ուսումնասիրությունը: Լենինի մասն այդ հարցն ավելի
սրեց, կուսակցության անդամների մեջ ուժեղացնելով
հետաքրքրությունը դեպի թեորիան: XIII-րդ համագումար-
ը միայն արտացուցեց այդ արամագրությունը, մի շարք
վորոշումներով հաստատելով Լենինիզմի ուսումնասիրության
և պրոպագանդայի անհրաժեշտությունը: կուսակցության
անեկիքը կայանում և նրանում, վոչ ողտագործե դեպի
թեորիան մեծացող հետաքրքրությունը և ամեն միջոց
ձեռք առնե, վորպեսզի վերջապես կուսակցական թեորե-
աթիկ մակարդակը վայել աստիճանին բարձրացնի: Պետք
չե մոռանալ Լենինի խոսքերն այն մասին, վոր ստանց
պարզ և ուղիղ թեորիայի, չի կարող լինել ուղիղ պրակ-
տիկա:

ԳԱՎԱՌԱՎԱՆ ԱԹԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերներ, պատահական չե, վոր համագումարի մա-
սին դեկուցումով հատկապես յես յեմ ձեզ մոտ յեկել:
Յես յեկել եմ ձեզ մոտ վոչ միայն այն պատճառով, վոր
գուք ցանկանում եյինք այդ, այլ և, վորովհետև զարդաց-
ման տվյալ աստիճանում զավտան ընդհանրապես և գա-
վտական աշխատանքները մասնավորապես, կազմում են
կուսակցության և գյուղացիության, քաղաքի և գյուղի
մեջ կարևորագույն ողակը: Իսկ գուք լավ գիտեք, վոր
քաղաքի և գյուղի մեջ մերձեցում հաստատելը ներկայու-
մըս մեր կուսակցական և պետական պրակտիկայի հիմ-
նական հարցն և:

Վերևում ասացի, վոր պետական արդյունաբերու-

թիան և գյուղական անտեսութեան մերձեցում հաստատեին ընթանալու և յերեք գծով.— սպառողական կոոպերացիայի, գյուղատնտեսական կոոպերացիայի և սասրին վարկային կոոպերացիայի գծերով: Ասացի, վոր այդ յերեքը մերձեցման գործի կազմակերպման հիմնական յերակներն են կազմում: Սակայն յերեակայութեան կլիներ յենթադրել, վոր մեզ այժմ իսկ կհաջողվի արդյունաբերութեանը գյուղական անտեսութեան հետ կապել անմիջապես շրջանների միջոցով, առանց հաշվի առնելու դավաւոր: Կարիք չկա ապացուցելու, վոր դրա համար մենք վոչ ուժ, վոչ միջոցներ և վոչ ել փորձառութեան ունենք: Այդ պատճառով քաղաքի և գյուղի մեջ հանդուցակետը մնում և գավառը: Վարպեսդի ամրասնդենք առևտուրը, բոլորովին ել կարիք չկա վերջին շրջանից իսկ վանդվի վերջին գյուղանշին: Դրա համար հարկավոր և միայն, վոր գավառը դառնա խորհրդային առևտրի բազա, այն հաշվով, վոր գավառի խորհրդային-կոոպերատիվ խանութի շուրջը ստիպված լինեն մոլորակների նման, ինչպես արևի շուրջը պատույտ-պատույտ անել բոլոր և ամեն տեսակ խանութպանները: Վարկին տիրապետելու համար բոլորովին կարիք չկա շրջաններն ու գյուղերն այժմ իսկ ծածկել վարկային կոոպերացիայի ցանցով.— բավական և գավառում հիմնել բազա, վորպեսզի անմիջապես գյուղացիութեանը հեռանա կուլակից ու վաշխառուից: Յե՛վ այլն և այլն:

Կարձ.— գավառն ամենամոտիկ ժամանակում պետք և քաղաքի և գյուղի, պրոլետարիատի և գյուղացիութեան մերձեցումը կազմակերպելու հիմնական բազա դառնա:

Ինչքան շուտ և տեղի ունենալու այդ, կախված և ձեզնից, գավառի աշխատավոր ընկերներ: Այժմ դուք 300 հոգի եք: Դա մի ամբողջ բանակ և: Ձեզնից և մեր յերկրի գավառների ձեր ընկերներից և կախված, վորպեսզի գավառը մոտիկ ժամանակներում արդյունաբերութեան և գյուղական անտեսութեան մեջ մերձեցում հաստատելու մեր

կուսակցական և պետական աշխատանքների համար հանդուցակետ դառնա: Ձե՛մ կասկածում, վոր գավառական աշխատավորները կկատարեն դեպի կուսակցութեանն ու յերկիրն ունեցած իրենց պարտականութեանները:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Արտաքին գործեր	4
2. Մերձեցման հարցեր	9
3. Աշխատափորական մասնաշխատարանի յեզվ վերա- դաստիարակման հարցեր	17
4. Կուսակցություն	22
5. Գաղափարական աշխատությունների անելիքների մասին	29



26.

